ՆԵՐԸ զառաջինն խաղցուեցան 1782 Յունվարին, երկրորդ ներկայացումն տեղի ունեցաւ մի և նոյն տարւոյն Մայիս ամսուն մէջ։— Մինչեւ այն ժամանակ բնաւ տեսնուած չէր Գերմանիոյ մէջ այսպիսի նորանշան տեսարանական յաջողութեան մ՝ օրինակն։ Աւիւնն անսահման էր, սոյն գործոյն դիւցազնին՝ Շարլոտ Մօրի նման, Գերմանիոյ քաղաքաթիւ քաղաքաց ուսանողները կամեցան աւազակներ լինիլ ընկերութեան կազմակերպութիւնը բարեբաւելու համար։ Այս աւիւնը լաւ գնահատելու և Շիլլերի այս առաջին թատերգութեան մասին Ֆրանսացի եւ Գերմանացի մի քանի քննագատից անարդարութիւնը մատնանիշ առնելու համար անհրաժեշտ է Ա—աղչայ ներկայացումէն յառաջ Գերմանիոյ թատերագրութեան վրայ ակնարկ մի ձգել։

(Շարունակի է։)

ՊԱՏՄԱԿԱՆ

(Շարունակութիւն, տես թիւ 9։)

Օսմանեան Պետութիւնն, որ ժամանակէ մ՝ ի վեր այսքան ազիտից և վտանգներու պատահելով մեծագումար ծախսեր ըրած էր, իսկ Յունաց խռովութեան երկարին, և ի վերջոյ Ռուսաց պատերազմին բացուին, ծախուց դռներն յայնժամ կրկնապատիկ բացին. այսքան զօրաց բազմութիւնը կառավարել, և ժամանակին ըստ արժանւոյն նոցա հարկ եղած պարէն, պաշար և այլ կարեւոր պէտքերը հոգալ եւ պատրաստել, մեծամեծ գումարներու կարօտութիւն ունէր. և յայտնի է թէ մինչև ցայսօր միայն կայսերական հանքերէն գոյացած զուտ արծաթը, այսքան պատերազմի և այլ կարեւոր ծախուց չպիտի բաւէր. այս ընդհանուր նեղութիւնը և տագնապը բառնալու և դիւրին միջոց մը գտնելու համար, ամենայն մեծամեծք մեծի դէնպէտին (ՇԷյխ ի—Լիսլամ) դուռը 'ի ժողով գումարեցան, և անդ միաբան հաւանութեամբ որոշեցին խառն բաղադրութեամբ հինգնոց, հարիւրնոց և այլն, ՃԷՀԿՊԻՆԷ անուանով ՃԵՐՄԱԿ դրամ, եւ ըստ առաջնոյն դարձեալ ոսկի հատուցնել, ընդարձակ միջոցին դարձեալ զայն օրինաւոր կայսերական դրամի փոխարկելու պայմանաւ։ Մեծ Եպարքոս ԻՍՂԷԹ ՄԷՀԷՄԷՏ փաշայէն բէՃԷպ ամսոյ 19 ին կայսերական կնիքն առին և զինքն աքսորեցին 'ի ԹԷՖԷՐ քաղ։ և նորա տասիճանին բարձրացաւ ՐԷշիտ ՄԷՀԷՄԷՏ փաշայ 'ի վարձ իւր հաւատարիմ և հանճարեղ ծառայութեան։

Վալաքիայի կողմէն Ռուսաց զօրքը յարձակեցան, և Նիկոպոլիի առջեւ նոր բերդին վերայ պատերազմը սաստիկ կերպով սկսաւ. սակայն ըստ նախասահմանութեան բարձրելոյն, նոյն բերդին եւս Ռուսք տիրեցին, իսկ այն կողմը գտնուած իսլամ զօրքը, և ՄԷՀՄԷ-ԲԱՇԻ ասասիճանաւոր պատուեալ Իպրահիմ փաշան [illegible] նոր գերի վարեցան, և ա[illegible]ը անմիջապէս մայրաքաղաքը տարածեցաւ։

Ինչպէս յառաջագոյն, նոյնպէս և այժմ կայսերական հրամանաւ որոշեցաւ, ամենայն նախարարք և պաշտօնեայք Դրան առ հասարակ, 'ի բաց թողուլ իրենց պաշտօնական և հասարակ հագուստները, զորս իսկզբանէ անտի սովորութիւն ունէին զգենուլ, և փոխանակ նոցա, գիտնականաց դասն փակեղ և վերարկու, իսկ նախարարք, պաշտօնեայք Դրան և ամենայն հասա-

digitised by A.R.A.R.@

թակուԹիւնն ֆէս և խոռասանի զգենուլ, և միաձայն հաւանուԹեամբ որոշուած այս խնդիրն յօդուած առ յօդուած գրեցաւ, և հասարակուԹեան դիւրուԹեամբ և բարւոք իմանալու համար տպագրեցաւ։

Քանի մը դէպքեր. փոփոխուԹիւն պաշտօնէից, կայսերական գնդին Վոսիորի նեղուցը փոխադրիլն, Օսմանեան նաւատորմին դէպ ի Սեաւ ծովուղեւորիլն, Պարսից Դեսպանին գալուստը։

Այն ժամանակին Ռուսաց մի քանի նաւեր գալով Սեաւ ծովուն եղերքը շինուած Սուլայ պօլին պաշարեցին և սկսան նեղել, որովհետև մէջը գտնուած զօրքը յառաջագոյն անտի խոյս տուած էր, Թշնամիք դիւրուԹեամբ տեղւոյն տիրեցին, և նորա պահապան Մէրմրաննէրէն Պէնտէրցի Խալիլ Համտի փաշան կապանօք գերի վարեցին. ասոր վրայ կայսերական կառավարուԹիւնը փոյԹ տարաւ այն կողմերը կարելի եղածին չափ ամրացնել, և ուրիշ հաւատարիմ պաշտօնեայներ խրկել։ Գալայի պէյ (հին բերդ) կոչեցեալ ամրոցն եւս անձնատուր լինելով՝ Թշնամեաց ձեռք անցաւ, և բերդապահ, արքունի սենեկապետ Ահմէտ աղայ Թշնամւոյն կողմն անցած էր։ Նիկոպոլիի պահապան Ճէլալ փաշան պաշտօնէն հանուելով աքսորեցաւ 'ի Թէքիր տաղ, և ապա հրամանաւ արքայի ինչքը և ստացուածքը յարքունիս գրաւեցաւ. փաշայուԹեան անունն ալ բոլորովին ջնջուելով, միայն պէյ տիտղոսով մնաց։ Մեծ ապարապետն Սէր փարի էֆէմ, Նէվվալ ամսոյ սկիզբը Շումլիի բանակատեղին ժամանեց, և Ռուսէլիի վեզիրուԹիւնը, որ տակաւին իւր վերայ էր, կայսերական հրամանաւ Սէլիմ փաշային տրուեցաւ։ Ժամանակին դէպքերը յայտնապէս կը ցուցնէին ԹէՀ այս տարի Թշնամիք մտադիր են աւելի ծովեզերեայ կողմանց վերայ բռնանալ, վասն որոյ խիստ հարկաւոր էր Պալգան լերանց կողմերը օրինաւոր վէզիր մի ղրկել, ուստի Ռուսճուքի պահապան Ապտրրահիմ փաշան Պալգաններու սպարապետ անուանեցաւ, և սորա նախորդ Հիւսէին փաշան, իւր տեղը յաջորդեց։

(Շարունակելի։)



ԱՆՕՐԻՆԱԿ ԴԷՊՔ ՄԻ

Վերջին մի քանի տարիներու մէջ քաղաքիս այլ և այլ կառավարչաց միակողմանի ընԹացից շնորհիւ շատ աղէտներ կրեցինք, շատ բարբարոսուԹեանց ենԹարկուեցանք, և շատ անգամ դարաւոր իրաւունքնիս կորսընցուցինք. բայց ամսոյս 24ին տեղի ունեցած դէպքը ոչ տեսած էինք և ոչ տեսած էին մեր նախորդները, զոր մեք տեսանք, զգացինք և կարեւէր խոցեցանք. սակայն ինչ օգուտ, քանի որ արդարուԹիւն, իրաւունք եւ ամենուիրական բան Կառավարչի մը քմահաճ կամքն է և ոչ այլ ինչ. ինչ օգուտ, քանի որ շատ անգամ բողոքեցինք, շատ անգամ աղաղակեցինք և շատ անգամ իրաւունքնիս ցուցնելով՝ պաշտպանուԹիւն հայցեցինք. սակայն Կայսերական Բարեխնամ ԿառավարուԹիւնը դժբաղդաբար ներքին եւ արտաքին ծանր գործերով զբաղուած լինելով՝ ուշադրուԹիւն գրեԹէ չկարաց դարձուցանել։

digitised by A.R.A.R.@